

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԳԵՍՏՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ներկայ յօդուածիս նպատակն է, ինչպէս վերնագիրն էլ ցոյց է տալիս, որոշել այն ժամանակը թէ երբ կղերի կռները աստուածալաշտութեան ժամանակ սկսեցին գործածել առանձին, յատկապէս եկեղեցական սրբազան զգեստներ, այս կամ այն առջնաւութեամբ տարբեր՝ ինչպէս ընդհանրապէս աշխարհիկ զգեստներից, այնպէս և մասնաւորապէս կղերիկռների՝ թէ տանը և թէ հասարակական կեանքի մէջ գործածած հագուստներից:

Վերոյիշեալ խնդիրը լուծելու համար, ի հարկէ, անհրաժեշտ է քրիստոնէութեան առաջին գարերին գիմելը և մանաւանդ առաքելական ժամանակին, որտեղից սկիզբն է առնում ծիսական քրիստոնէական աստուածալաշտութիւնը, և ամենից առաջ այդտեղ վնասուել մեր խնդրի լուծումն Գիտնականներից ոմանք¹⁾, որսնցից մեզ յայտնի է Բոնա²⁾, իսկապէս մատնանիշ էին անում թէ՝ եկեղեցական զգեստները սկսուել են առաքելական ժամանակից:

Սակայն, ի զուր կը փնտուենք որևէ ցուցմունք առաքելական կարգադրութեան sacramentum vestium-ի համար։ Զկայ նոյն իսկ ամենափոքր ակնարկութիւն այդ առթիւ ոչ առաքեալների, և ոչ նոցա յաջորդող եկեղեցական հեղինակների գրուածոց մէջ, որ բոլորովին անհասկանալի կլինէր, եթէ, իսկապէս, առաքեալները ամենօրեայ հագուստից տարբերելու համար աստուածալաշտութեան առանձին առանձին զգեստների ձևի նկատմամբ երբ և իցէ կարգադրութիւն արած լինէին։ Եթէ, յիրաւի, Բոնա Գիտնականը իւր կարծիքը հաստատելու համար յէնուում էլ է երանելի Օգոստինոսի խօսքերի վերայ, որն իւր «Մկրտութեան մասին»

1) Krieg. Kleidung liturgische—vestes sacrae.—Real—Encyclopädie der christ. Altert. von F. X. Kraus. B. II. s. 195.

2) Իւր աշխատութեան մէջ՝ Rerum liturgicarum libri duo. 1674. Zib. I. cap. V. col. 41—43. conf. cap. XXIV, col. 324—325.

գրքում, ի միջի այլոց, ասում է՝ «այն բոլորը, ինչ որ բովանդակում է ընդհանուր եկեղեցին և չէ հաստատուած ժողովներով—տրուած է առաքեալների հեղինակութեամբ», — այն ժամանակ, ի հարկէ, ինքն ըստ ինքեան կարիք չկայ բացատրելու, որ եկեղեցւոյ ուսուցչի այդ բոլորովին ճշմարիտ խօսքերը չեն կարող ունենալ այնպիսի ընդարձակ նշանակութիւն, որպիսին նոցա տալիս է Բոնա, և չունին ոչ մի յարաքերութիւն մեր խնդրի հետ։ Հակառակ դէպքում, այդ խօսքերի հիման վերայ կարելի է ամբողջ ծիսական աստուածպաշտութիւնը իւր բոլոր մանրամասնութիւններով ընդունել առաքելական կարգադրութիւն, որը պատմական անհեթեթութիւն կը լինէր։ Բացի այդ, սովորական հագուստներից բոլորովին տարբեր մի նոր եկեղեցական—աստուածպաշտութեան զգեստներ ձեռք բերելը քրիստոնէութեան առաջին գործերի համար ոչ միայն գժուար գործ էր, այլ և բոլորովին անհնարին, որովհետև այդպիսի մի գիւտ, մի կողմից ենթադրել է տալիս գեղարուեստական ճաշակի և ընդունակութեան զարգացումն դէպի արուեստը, իսկ միւս կողմից—պահանջում է յարմարութիւն, — սակայն ոչ մէկը և ոչ միւսը չէր կարող լինել առաջին գարերի քրիստոնէական համոյնքների մէջ, որոնք կազմուած էին ամենայն կողմից թշնամիներով և հալածիչներով շրջապատուած աղքատներից և հասարակ մարդկանցից։ Եւ, զերջապէս, ինչպէս ստորև կտեսնենք, քննելի հայեացքը հակասում է բոլոր գրական պայմաններին, որոնց մէջ քրիստոնէութիւնն և եկեղեցին աշխարհ մտան։ Միով բանիւ, պէտք է հրաժարուել այն կարծիքից, թէ sacramentum vestium, a profanis et communib[us] distiinctarum ներմուծուած է առաքեալներից անմիջապէս։

Ճշմարտութեան աւելի մօտ է թուում այն հայեացքը, թէ կղերիկոսների աստուածպաշտութեան զգեստները գետես առաքեալների և կամ նոցա ամենամօտ յաջորդների ժամանակ փոխ էին առնուած հին կտակարանի քահանական զգեստներից, պատրաստուած էին վերջինների նման, նոցանից էին ընդօրինակուած։ այսպէս, ուրեմն

ամենավաղ ժամանակներում արդէն կային աշխարհիկ, սովորական զգեստներից տարբեր, յատուկ եկեղեցական սրբազն զգեստներ։ Այս հայեացքի հիմքը դրին Խ—XIII դարերի ժամակարգութեամբ զբազւողները։ Այս շրջանը եկեղեցական հետախուզութիւնների մի առանձին կենդանի շրջան էր,—բացի այդ, նա միևնոյն ժամանակ առանձնապէս հաւատոյ հանգանակի ծաղկման շրջանն էր։ Այդ ժամանակ, սուրբ գրքով սաստիկ հետաքրքրութիւնը համարեա բոլորովին հակած էր գէպի խորհրդաւոր (սիմվոլիզմ) մեկնութիւնը, իսկ խորհրդաւորութիւնը Ղետական զգեստների մեկնութեան մէջ էլ էր իշխում։ Հիմնուելով այն ենթագրութեան վերայ, որ հին կտակարանի յայտնեալ ոինը հիմք է նոր կտակարանի, այն ժամանակի ժամակարգութեամբ զբազւողները, ընդհանրապէս նաև աստուածալշտութեան զգեստների հարցում աշխատում էին գտնել մի նմանութիւն հին և նոր կտակարանի մէջ, և այստեղից սկսուեց հին կտակարանի հետ նոր կտակարանի զգեստների ունեցած կազի նշանակական բացատրութիւնը, և այսպիսով Ղետական զգեստները քրիստոնէականի նախատիպն ընդունելը։ Ահա այսպիսի հայեացքն եղաւ պատճառ, որ այն ժամանակ, եկեղեցիներում, որպէսզի հին և նոր կտակարանների զգեստների նմանութիւնն աւելի աչքի ընկնի, սկսեցին կցել աստուածալշտական, գլխաւորապէս եպիսկոպոսական զգեստներին զանազան յաւելումներ և լրացուցիչ մասեր։

Այդ ժամանին, խկապէս, վկայում է Խ-րդ դարի հեղինակ Վալիֆաֆրիդ Ստրաբօ, ասելով. «Մի քանի անձնուորութիւններ սրբազն զգեստների մէջ լրացուցիչ մասեր աւելացրին, կամ նոյն զգեստներին նմանուելու համար, որոնք գործ են ածում հին կտակարանի քահանաները և կամ միստիքական բացատրութիւն տալու համար»¹⁾։

1) Waliafridus Strabus. Fnildensis monachus. De ecclesiasticarum rerum exordiis et incrementis. cap. XXIV y Migne, Curs. compl. ser. lat. t. 114. col. 952.

IX—XIII-րդ դարը ժամասացութեամբ զբաղվողների Սիմվոլիկայի միջոցով սկզբնաւարուած հայեացը՝ թէ քրիստոնէական առաջին եկեղեցին ժամասացութեան զգեստները փոխ է առել հին կտակարանի քահանայութիւնից, նօցանից յետոյ դեռ երկար ժամանակ էլ իւր նշանաւոր ներկայացուցիչներն ուներ*¹⁾)

Բայց այս հայեացըն էլ, իրքեւ պատմութեան բոլորովին անհամաձայն և մի միայն սիմվոլիկի վերայ հիմնուազ, — պէտք է մերժուի: Նախ և առաջ հէնց այն հակադրութիւնը, որ յայտնուեց հին կտակարանի կրօնի աստուածապաշտութեան արտաքին ձևական ծիսակատարութեան և քրիստոնէական կրօնի ներքին հոգեոր պաշտամունքի մէջ ցոյց է տալիս, որ առաջին դարերում հին կտակարանի քահանայութիւնից ժամասացութեան զգեստների ոչ մի կերպ փոխառութիւն տեղի ունենալ չէր կարող: Առաջին դարերի հաւատացեալները խորշում՝ էին նոյն իսկ իօնէու (Քուլոմ) անունից, իրքեւ հրէական քրմութիւն յիշեցնող և նորան փոխեցին επίչροτος (Եպիսկոպոս) և ուշօւտակ (առաջնորդ) անուններով: Դորանից յետոյ էլ ինչպէս կարող էին նորա իրանց պաշտամունքի մէջ ընդունել այն զգեստները, որոնք պիտի յիշեցնէին նոցա հրէական՝ իրենց նշանակութիւնը կորցրած պաշտամունքները և միենոյն ժամանակ այն քահանայութեան զգեստները, որոնք յատկացուած էին որոշ ցեղի և ազգի:

Այդ դեռ բաւական չէ, այն հանգամանքները, որոնց մէջ քրիստոնէութիւնը աշխարհ մտաւ և որոց ժամանակ նա պիտի դոյսութիւն ունենար, թոյլ չեն տալիս, որ եկեղեցին իւր ժամասացութեան համար հին կտակարանի կրօնի զգեստներ փոխ տռնէր: Հէնց ոկլզից քրիստոնէական եկեղեցին հրէաների ատելութեան և թշնամութեան ենթարկուեց, իսկ երբեմն երբեմն նաև արիւնալի հալածանքներ կրեց: (Ստեփաննոս նախավկայ և Յակովը առաքեալ): Այդ ատելութիւնն ու հալածանքները յաջորդ դարերում

1) Krieg. Cit. op. y Kraus'a br R. Enc. B. II. s. 175.

և շարունակուեցին։ Երերի այսպիսի գրութեան մէջ հազիւթէ հնարաւոր լինէր եկեղեցւոյ ներկայացուցիչներին օգտաւել հրէական քահանայութեան զգեստներից, որովհետեւ, դորանով նորա հրէաների կողմից, իբրև օրինազանցներ և օրէնք պղծողներ, աւելի հալածանքի կենթարկուէին։ Միւս կողմից, եկեղեցւոյ ներկայացուցիչները հրէական քահանայութեան զգեստներից օգտուելուց պէտք էր խորշէին նաև աչքի առաջ ունենալով հեթանոսների դէպի հրէաներն ունեցած ատելութիւնը, թշնամութիւնը և հալարտ արհամարհանքը դէպի նոցա կրօնը, ծէսերը, ապա թէ ոչ, հոկտուակ դէպքում, եկեղեցւոյ ներկայացուցիչները կոկոսէին միշտ յիշեցնել հեթանոսներին նոցա համար ատելի արտաքին ծիսական Մովսիսական օրէնքը, և դորանով նոցա՝ եկեղեցւոյ մէջ մանելուն արգելք կլինէին։ Բայց, մեր քննած հայացքի դէմ գլխաւորապէս խօսում է պատմութիւնը։ Առաջին ուժ տարիներից, գոնեա, չկայ որևէ պատմական փաստ, որ եկեղեցական զգեստաւորութիւնը մուծուած լինէր Ղետականին նմանուելով, եթէ այդ երբ և իցէ պատահած լինէր, այն ժամանակ անհասկանալի կը լինէր, որ Առւրբ Հարց գրականութեան ոչ մի հեղինակ այդ յատուկ ծիսական զգեստաւորութեան մասին բոլորովին չէ յիշում։ Այդ յիշատակութիւնը չկայ նոյն իսկ այն տեղ, ուր ուղղակի առիթ կայ դորա համար։ Օրինակ, շատ հեղինակների մօտ Ղետական զգեստների համար բացատրութիւն ենք գտնում, սակայն նոցանից ոչ մէկի մօտ չենք գտնում ցուցմունք, որ այդ զգեստները գործադրութիւն գտած լինէին նախնական քրիստոնէական եկեղեցւոյ մէջ։ Օրինակ, Հերոնիմոսը երկու անգամ յիշում է հին կտակարանի քահանայութեան զգեստների մասին, մի անգամ նոյն իսկ շատ մանրամասը քննում է՝ սակայն երբէք ամենափոքրիկ ակնարկ անգամ չէ անում, որ այդ զգեստները քրիստոնէութեան ժամանակ ընդունուած լինէին։ Նոյն իսկ նորա ասածների ուրիշ կտորներից կարելի է եղրակացնել բոլորովին հակառակը¹⁾ Վերջապէս

¹⁾ Տես Նեպոցիանին գրած նամակը. (49-ն Տեօրեն. ճ. 1-ը)

հին կտակարանի կրօնական ծիսակատարութիւնից քրիստոնեաների եկեղեցական զգեստների փոխառութեան կարծիքի գէմ խօսում են նաև նշանաւոր վկայութիւններ։ Համեմատելով հին կտակարանի զգեստաւորութեան հետ գեղարուեստի հին յուշարձանների վերայ պատկերացրած զգեստաւորութիւնը քրիստոնէական ժամակարգութեան, մենք կտեսնենք, որ քրիստոնեաների մօտ բոլորովին պակասում են հրէական քահանայութեան ընորոշ զգեստները, իսկ միւս կողմից քրիստոնեայ եկեղեցւոյ պաշտօնեաների մօտ կդանենք այնպիսի զգեստներ, որոնց նմանը հին կտակարանում չկայ, ճշմարիտ է, քահանայապետական և Դետական զգեստները ունեցել են որոշ ազդեցութիւն քրիստոնէական եկեղեցւոյ աստուածապաշտական զգեստաւորութեան ձեի և յատկութեան վերայ, — ինչպէս այդ երեսում է վերև յիշատակուած Վալիաֆրիդ Արտաքո-ից, — սակայն այն մասնաւոր ազդեցութիւն է, և այն էլ յիտին դարերում, որ երեսում է նոյն վկայից։

Այսպիսով, ուրեմն, մնում է այն հայեացքը, թէ նոր կտակարանի ժամապաշտութեան զգեստները առաջ են եկել աշխարհիկ զգեստներից, և հետեւապէս, քրիստոնէութեան առաջին դարերում, իւր արտաքին տեսքով սովորականից տարբեր յատուկ եկեղեցական որևէ զգեստաւորութեան մասին խօսք լինել չի կարող։ Յօգուտ այդ հայեացքի մեծ հեղինակաւորութեամբ շատ փաստեր են խօսում, որոնք միենոյն ժամանակ կարող են ծառայել իրեւապացոյց և առաջին երկու կարծիքների անհաստատութեան։

Քրիստոնէական կրօնը աշխարհիս վերայ երեալով, իրրե հոգւոյ և ազատութեան կրօն, իւր հետեւողներին իրենց կեանքի մէջ որևէ պատաքին ձեւական կարգադրութիւններով չեր ճնշում, որևէ պատաքին ծիսակատարութեանից ճնշում, որևէ պատաքին ծիսակատարութեան։

ронима въ рус. перев. т. II. ст. 67—68), и Оդиссеи нони[н] пп. 49а
նամակը. (90-ն նոյն տեղը 506—507):

թեանց նշանակութիւն չէր աալիս: Նմանապէս քրիստոնէին շըապատող առարկաների գործադրութեան մէջ որևէ խիստ ընտրութիւն չէր պահանջում:— քրիստոնեան կարող էր իրեն շըապատող ամեն բանից օգտուել, — միայն թէ այդ չմնասէր նորա հոգեսր էութեան, այսինքն, նորա մէջ չարծարծէր կրօնական կամ բարոյական տարակուսանքներ: Այս տեղից մենք տեսնում ենք, որ առաքեալները և նոցայաջորդները չեն քաշուում իւրեանց նպատակների համար հեթանոսական այս կամ այն առարկայի գործածութիւնից օգտուել: Այս տեսակին պիտի վերադրել հեթանոսութիւնից հաւատքի եկածների մասնաւոր բնակարանները, որոնք գործ էին ածուում իբրև եկեղեցական ժողովատեղին: Այս կարգին պէտք է վերադրել նաև սովորական աշխարհիկ գործածութեան՝ ինչպէս օրինակ անօթներ, զանազան կարասիներ, որոնք եկեղեցւոյ թշուառութեանց ժամանակ նորա ներկայացուցիչների կողմից ընդունուում էին իբրև նուէր և գործ էին ածուում պատարագի համար: Բայց եթէ քրիստոնէութեան առաջին գարերում հեթանոս աշխարհի առարկաներից չէին խորչում, ընդհակառակը թէ շինութիւններն եկեղեցական ժողովների համար և թէ աստուածպաշտութեան համար հարկաւոր զանազան անօթներ փոխ էին առնուում սովորական, աշխարհիկ գործածութիւնից, ապա ուրեմն, շատ բնական է, որ նաև այն զգեստները, որ գործադրում էին ժամանակաշտութեան ժամանակ եկեղեցւոյ վարիչները, փոխ էին առնուած սովորական աշխարհիկ տնտեսութիւնից և հետեւապէս, իրենց ձեւով տարբեր չէին այն զգեստներից, որոնք գործ էին ածուում թէ մասնաւոր և թէ ընտանեկան կեանքի մէջ:

Այս հայեացքն աւելի է համատասխանուում պատմութեանը: Նախ և առաջ, առաքեալների նկատմամբ պէտք է ասել, որ իրենց առաջ ունենալով երկնային Ռւսուցչի օրինակը, որը վերջին գիշերը հին և նոր կտակարանների սուրբ զատիկ էր կատարում, անկասկած այն զգեստով, և որն այդ պատճառով, իհարկէ, իւր արտարին ձեռվ չէր

տարբերում ժողովրդի այն ժամանակ գործ ածած
զգեստներից, նոքա էլ կարող էին առանց տարակուսելու,
ժողովրդի իսկ սովորական հազուսատվ մերձենալ նաև
զոհաբերութեան խորհրդաւոր սեղանին։ Նոյն իսկ հանգա-
մանքները, որոնց մէջ առիթ էին ունենում նոքա ժամա-
սացութիւն կատարելու, ուղղակի դրդում էին նոցա դէպի
այդ։ Առաքեալները ցրուելով զանազան հեթանոս աշխարհ-
ներ աւետարանը քարոզելու, անկասկած, ոչ մի կերպ
չէին կարող իրենց հետ որոշ ձեւական եկեղեցական զգեստներ
ունենալ, ¹⁾ և անհրաժեշտաբար հազորդութեան խորհուրդը
պիտի կատարէին այն զգեստներով, որոնցով նոքա օդ-
տւում էին սովորական աշխարհիկ տնտեսութիւնից մի
միայն վերցրած լինել։ ²⁾ Ընդհանրապէս առաքելական
ժամանակի ժամասացութեան աշխարհիկ զգեստների հետ
ունեցած ձեւական նմանութեան զաղափարին բոլորովին
չէ հակասում և հին կտակարանի կրօնական ժամասացու-
թիւնից եկեղեցական զգեստների փոխառութեան մասին
մինչև մեղ հասած աւանդութիւնը, որի համեմատ, որպէս
թէ Յակովը, Յովհաննէս և Մարկոս ³⁾ առաքեալները կրում
էին ճակատի կապ (πετάλον, lamira), որն ի միջի այլոց հին
կտակարանի քահանայութեան զգեստների մի մասն էր
կազմում։ Այն ժամանակ, երբ քրիստոնեաների համար
սրոշուած չէր առանձին զգեստաւորութիւն, և երբ, այդ
պատճառով, ինչպէս մասնաւոր կեանքի, նոյնպէս էլ ժա-
մակացութեան մէջ բոլորովին ազատ էին, — բոլորովին
զարմանալի չէ, որ տեղի ունենային դէպեր, երբ մի
քանի անձնաւորութիւններ թոյլ տային չնշին և անկարեսը
շեղումներ Յոյների և Հոռվայեցիների այն ժամանակ
սովորական զգեստներից։ Այդպիսի բացառութիւններին

1) Համ. Մատթ. Փ. 10. Մարկ. Զ. 9.

2) Համեմ. Նաև Մատթ. Զ. 29 և Պուկ. ՓԲ. 22, 23, 27.

3) Epiphēn Haerēs. 29, 78, 14. (Хр. гм. 1848 ил. 1). Եւսեբիս.
եկեղ. պատմ. Գ. 6. դ. 54; Հերոնիմոս եկեղ. գրիների մասին. գլ-
45. (твор. бл. Йерон. въ рус. перев. т. V. ст. 315).

պիտի վերագրել նաև ճակատակապի դէպքը՝ ճակատակապը, որի մասին խօսում է աւանդութիւնը և որն այստեղ ի նկատ է առնուած, բացառապէս ժամասացութեան վերաբերեալ մի զգեստ չէ, այլ սովորական մի զգեստ, որը Յակովիս, Յովհաննէս և Մարկոս առաքեալները դործ էին ածել նաև մասնաւոր կեանքի մէջ և ամենեին չի հերքում յիշեալ առաքեալների միւս զգեստների աշխարհիկ լինելը: Բացի այդ ճակատակապը, ոչ միայն հրէական քահանաների ժամասացութեան զգեստն էր, այլ և էր պարթենների, հայերի և պարսիկների սովորական գլխի զարդ: ¹⁾)

Թէ առաջին դարերում, ժամասացութեան ժամանակ կղերիկոսների դործ ածած զգեստները ըոլորովին չէին տարբերուում թէ տարազով և թէ ձեռվ այն ժամանանուայ Յոյների և Հռովմայեցիներից զգեստներից, այլ ընդհակառակը, վերջիններից էին փոխ առնուած, այդ առանց կասկածելու ցոյց են տալիս բազմաթիւ յուշարձանական, նաև մասնաւոր գրաւոր վկայութիւններ: Քննելով քրիստոնէական գեղարուեստի մեր հարցին վերաբերեալ հնագոյն յիշատակարանները, ինչպէս վկայում է նաև Յոկիը, որ քանիցս յաճախել է Հռովմէական ստորերկրեայ գերեզմանատները (կատակոմբները) և Հռովմի, Յավիննայի և Խտալիայի միւս մասերի սրբերի հնագոյն դամբարանները (քաղելիկ). Ճի կարելի նոյն խոկ ամենափոքրիկ հետք գտնել այն բանի, որ քրիստոնէութեան առաջին դարերում առաքեալները և նոցա յաջորդները, նմանապէս և քահանաներն ու սարկաւագները, խորհուրդներ կատարելու ժամանակ օգտուած լինին ըոլորովին նոր ձեռվ կազմուած և կամ հին կտակարանի քահանայութիւնից փոխ առած զգեստներ, ընդհակակառակը, մի ակնարկը այդ յիշատակարանների պարզապէս ցոյց է տալիս, որ առաջին դարերում պաշտօնեանների զգեստները ձեռվ և տարազով ըոլորովին համանման էին այն ժամանակուայ աշխարհիկ զգեստներին: Այսպէս օրինակ, կատակոմբերի իւղանկար պատկերները,

1) Տես Ս. Հերենիմոսի դորժերը, ուռւս. Թարգմ. հօր. եր. 122:

Հնագոյն հանգստարանների մողաիկան, նմանապէս և քրիստոնէութեան հին գեղարուէոտի հնագոյն յիշատակարանների պատկերները ներկայացնում են Քրիստոսին և առաքեալներին, իրենց գործունէութեան ժամանակ, ոչ այլ զգեստով քան աշխարհական։ Այսինքն, Քրիստոս այստեղ և՛ որպէս ուսուցիչ առաքեալների կամ հրէայ գլորիների մէջ, և՛ որպէս հրաշքներ գործող ներկայանում է բոլորովին խիստ աշխարհիկ զգեստով—պատմուճանով (ԵՍՈՒՏԱ) և վերնազգեստով (ՊԱԼԱ):¹⁾ Այդ ձեռվ է պատկերացրած նա, օրինակ, Հռոմում Ս. Կալլիստայի գերեզմանատանը, որտեղ նա տասն երկու առաքեալների մէջ նստած ուսուցանում է։ Նոյնալիու տեսքով ներկայացրուած է նա վեց առաքելների մէջ Ս. Ագնէսի գերեզմանատան պատկերի վերայ (ժօտ IV. դարն): Առաքեալներից յետոյ

1) Յունա—Հռովմէական զգեստները երկու դասի էին բաժանուած։ 1) indumenta—զգեստներ, որ հագնուում էին (նոյնալիս և vestimenta clausa կամ interiora—զգեստներ ներքին) և amictus (vestimenta exteriora—զգեստներ արտաքին): 2) Զգեստներ, որոնք իրեն շալ կամ շրջազգեստ վրան էին առնում։ Առաջին կարգին պատկանում էին՝ հռովմայէցոց tunica—բանկոնը և Յոյների ուտան—ներքնազգեստը։ Տունիկա (Յոյների խիստն), մի ներքնազգեստ է վուշց պատրաստած, որը ձեռվ մեր շապկին է նման։ Աշխատանքի ժամանակ հագնում էին նեղ, մինչև ծնկները կարճ բանկոն կամ, ևթէ նա երկար էր, չխանգարելու համար դօտէանդուում էր ազգրեների վերայ։ Աշխատաւրի այդ բանկոնը կամ բոլորովին տռանց թերի էր և կամ թէ կարճ թերով (colobium): Տօնական ժամանակը և ընդհանրապէս աշխատանքից ազատ ժամանակը կրում էին լայն երկար, մինչև կոճերը ձգուող, հարուստ փոթերով բանկոն (tunica, talaris, ուտան ոտնշնչութէ) երկար թերով (tunica manicata): Մինչև քրիստոնէութեան ժամանակը դուրս վերայից Հռովմայէցիք իրեն վերնազգեստ կրում էին լայն, երկար և հարուստ փոթերով վերնազգեստ—տոգա (toga), իսկ Յոյները տոգայի տեղ գործ էին ածում խիստնի վերայից իմաստի (պատու—երկար զգեստ), որ ամուր կերպով կպած էր լինում մարմնին առանց ազատ փոթեր արձակելու։ Կայսրների ժամանակ Հռովմայէցիները կրում էին տոգայի տեղ յունական յարմար իմաստի, բայց նորան անուանում էին պալլի։

յաջորդ դարերի եկեղեցւոյ ծառայովները ներկայացրուած են ընդհանուր աշխարհիկ զգեստով կատակոմբների պատկերներում և Հռովմի Բավիչնայի, Կ. Պօլսի և Թէսաղօնիկէի հնագոյն մողափիկներում։ Օրինակ, հասարակ զգեստով է պատկերացրած Հռովմի վերոյիշեալ Ս. Կալլիստայի գերեզմանատանը ձուկ և հաց բերող եկեղեցւոյ պաշտօնեանն նմանապէս շատ խիստ աշխարհիկ բնաւորութիւն ունին Ս. Հիպակոլիտի պատարագի զգեստները, որոնք պատկերացրած են նորա արձանի վերայ և կազմուած են՝ պատմուճանից (tunica) պալլիսայից (pallis) և հողաթափից (sandaliis)։ Առանձնապէս շատ պարզ ցոյց են տալի քրիստոնէութեան առաջին դարերի եկեղեցական զգեստաւորութեան աշխարհիկ զգեստների հետ ունեցած ձեւական նմանութիւնը Թէսաղօնիկէի Ս. Գրիգորի որբոց հանգստարանի մողափիկները։ Կարծիք կայ, թէ այդ եկեղեցին շինուած է կոստանդին Մեծի ժամանակ։ Այդ մողափիկները պատկերացնում են կղերիկոսներին և աշխարհականներին բուլորովին նման զգեստներով—երկար պատմուճանով և նորա վերայից լայն պենուլայով (ֆելոն)։ Թէ որքան քիչ էին ծանօթ առաջին դարերում պատարագի առանձին զգեստաւորութեանը, կարելի է իմանալ նորանից, որ մի քանի պաշտօնեաներ կատարում էին խօրհուրդները միայն պալլիսայով առանց պատմուճանի, որի մասին վկայում է Կրաուզի քերած կատակոմբների հին պատկերը (իւր աշխատութեան մէջ Roma Subterranea, tabl. VIII.), որտեղ զոհարերող քահանան խօրհուրդը կատարում է Փիլիսոփայական թխագոյն պալլիսայով (թիկնոց, քղամիդ)։ Նմանապէս և Օրիգէնը, որ իւր ժամանակակից Աղէքսանդրիայի Հերակլքահանայի համար ասում է, թէ վերջինս թողել էր իւր սովորական հագած զգեստը և միշտ գործ էր ածում փիլիսոփայական վերնազգեստը։ Ընդհանրապէս պէտք է նկատել, որ քրիստոնէութեան գեղարուեստի հին յիշատակարանները չեն թողնում որևէ կասկած, թէ առաջին դարերի եկեղեցական զգեստաւորութիւնը բոլորովին չէր տարրերւում ընդհանուր գործածական աշխարհիկ զգես-

տից և որ վերջինից էր փոխ առնուած։

Ինչ վերաբերում է մեր քննած հարցին յարաբերող գրաւոր վկայութեանց, (նոյն իսկ, պէտք է նկատել, քանակութեամբ բաւականին շատ), թէև նոքա մեծ մասամբ ուղղակի մատնանիշ չեն անում այն հանգամանքի վերայ, որ ժամապաշտութեան զգեստները փոխ առնուած լինին սովորական աշխարհիկ տնտեսութիւնից, այնուամենայնիւ կողմանակի կերպով հաստատում են այդ. Այսինքն, նոցամէջ բերուած տեղեկութիւնները, կարծիքներն ու կարգադրութիւնները վերաբերում են ոչ այլ որևէ է զգեստների գործադրութեան, քան այն, որ աշխարհականներն էին կրում։*) Բայց մի քանի գրաւոր յիշատակարանների մէջ, թէև ոչ այնքան նշանաւրը և աւելի ուշ ժամանակի, կան ուղղակի վկայութիւններ այն մասին, որ աստուածպաշտական զգեստները վերցրուած են աշխարհիկ գործածականից։ Սորան պիտի վերագրել, օրինակ, Յելեստին պապի (423—432) խօսքերը, որը յանդիմանելով Գալիայի եպիսկոպոսներին՝ իւր առ նոցա գրած նումակով, որոնք իրենց զգեստներով խստակեցութիւն ցոյց տալու համար, եկեղեցում կրում էին արեղաների պէս միայն կարծ պալից և կաշուէ դօտի, —ի միջի այլոց ասում է, թէ պէտք է տարբերուել ժողովրդից և միւս բոլորից doctrina, non veste (դաւանութեամբ և ոչ զգեստով)։

Սորան է վերաբերում նաև Յովհաննէս սարկաւագի նկատողութիւնը, որը Դրիգոր Մեծ պապի կենսագրութեան մէջ ի միջի այլոց ասում է, թէ ոչ ոք պապի շքախմբի մէջ, մեծից մինչև փոքրը, ոչ լեզուի և ոչ զգեստի նկատմամբ ոչինչ բարբարոսական (այսինքն՝ գերմանական) չրնդունեց, այլ ընդհակառակը՝ երկուսի նկատմամբ էլ լատինական ոգին պահպանեց։

Սորան պիտի վերագրել նաև կրօնաւոր պատմաբան Վալիաֆրիդ Ստրաբոյի հետևեալ նշանաւոր վկայութիւնը, որը նա տալիս է մեզ իւր պատարագի մեկնութեան մէջ։

*) Այս վկայութիւնները կը քննուին ստուեւ

և որը, հաւանականօրէն, նա վերցրել է աւելի հին հեղինակից. «սրբազան զգեստների նախկին ձեն ու պատրաստութիւնը կամաց կամաց զարգացան» Որովհետեւ առաջին դարերում պատարագը կատարում էր նոյն զգեստներով, ինչ որ այն ժամանակ բոլորը կրում էին, — մի սովորութիւն, որին արևելքում մի քանիսները այժմ էլ հետեւում են»¹⁾)

Ուրեմն, կասկած անգամ չի կարող լինել. որ պատարագի զգեստները ոչ թէ նոր էին կազմուած և կամ հին կտակարանի եկեղեցւոյ աստուածպաշտութիւնից փոխ առած, այլ ուղղակի վերցուած են քրիստոնէութեան առաջին դարերի սովորական աշխարհիկ զգեստներից։ Հետեւապէս խօսք լինել չի կարող, թէ եկեղեցական զգեստները, իրենց արտաքին ձևով, որպէս զգեստներ տարրերութիւն ունենային սովորականներից քրիստոնէութեան առաջին դարերում։ Արդեօք Երբ, ուրեմն, աստուածպաշտութեան զգեստները ստացան առանձին տարագ իւրեանց արտաքին ձեւով տարրեր սովորական աշխարհիկ զգեստներից։

Այս հարցի լուծման համար, ի հարկէ, անհրաժեշտ է հետեւ եկեղեցական պաշտօնեանների զգեստաւորութեան պատմական ընթացքին։ Սակայն պէտք է նկատել, որ այս խնդրի լուծուածութեանց է հանդիպում։ Այստեղ հարկ է լինում ոչ միայն պաշտօնական այլ և աշխարհիկ հագուստների զարգացմանը հետեւել։ Խոկ ճիշտ որոշ պատմական տեղեկութեանց բացակայութիւնը մի կողմից և հին զգեստների արուեստական բառագիտութեան անորոշութիւնը միս կողմից, — որովհետեւ խօսքի գործածութիւնը առանձին զգեստների անուանց համար շատ է փոփոխութեան ենթարկուել, և միևնույն անունը զանազան ժամանակներում զանազան նշանակութիւն ունէր, — շատ են գժուարացնում

1) W. Strabus. Cit. op. y Migne Curs. comp. ser. lat. t. 114, col. 529.

զգեստների զարգացման խոկական ընթացքի որոշումն։ Զի կարելի վերջնականապէս վճռուած համարել հարցը թէ ի՞նչպէս են աստիճանաբար փոփոխութիւն կրել և բարդուել աստուածաղաշտական զգեստները և ի՞նչ յարաբերութիւն ունէին սովորական աշխարհիկ զգեստների հետ։ Կարելի է աւելի կամ պակաս հաւանական ենթադրութիւններ անել, որոնք միշտ էլ այս կամ այն նկատմամբ կարող են կասկածի տեղի թողնել։ Սակայն այս բարդ և մեծ աշխատանքը մեր խնդրի մէջ չէ մտնում։ Մեզ համար բաւական կլինի գիտենալ, այն փաստերի հիման վերայ, որոնք ներկայ հանգամանքում կարող են ինկատի առնուել, թէ ժամանակի ի՞նչ շրջաններում աստուածաղաշտական և աշխարհիկ զգեստաւորութեան մէջ ձեւական նմանութիւն կար և որ ժամանակից սկսուեց նոցա մէջ ձեւական տարբերութիւնը։

Իբրև մէկը այն եղրակացութիւններից, որը մեր կարծիքով աւելի հաւանական, և որին մենք հասնում ենք գրաւոր և յուշարձանների վկայութիւններով, կարող ենք մատնանիշ անել այն հանգամանքը, որ գոնեա, մինչև VI դարի վերջը աշխարհական և աստուածաղաշտական զգեստների մէջ ձեւական տարբերութիւն չկար։

Զ-րդ դարից սկսում է երեալ ձեւական տարբերութիւն պատարագի զգեստաների և ժողովրդի հագուստների մէջ, սակայն հոգեսրականութիւնը շարունակեց կրել մինչև Թ. դարը (եթէ ոչ աւելի), մասնաւոր կեանքի մէջ ձեւով միևնոյն զգեստները, ինչ որ աստուածաղաշտական ժամանակ։

Ի՞նչ վերաբերում է առաջին երեք դարերին, յօդուտ վերոյիշեալ ենթադրութեան խօսում են նշանաւոր յուշարձաններ, որոնց մասին մենք վերիք խօսեցինք։ Այդ յուշարձանների հիման վերայ այդ ժամանակուայ աստուածաղաշտական զգեստ կարելի է հաշօւել բաճկոնը (tunica) և վերնազգեստը (pallium), — որոնք բոլորովին աշխարհական զգեստներ էին։ Յաջորդ դարերում ևս չկար տարբերութիւն իրենց ձեւով աստուածաղաշտական և համայնական զգեստների մէջ։ Այդ ժամանակ ճիշտ է, հոգեսր անձնա-

ւորութեանց զգեստների մէջ մեծ բարդութիւն առաջ եկաւ, Դ-րդ դարից երեան են գալիս եկեղեցական կարգադրութիւններ այս կամ այն զգեստը գործածելու համար, — կարդադրութիւններ, որոնք հաւանականօրէն խօսում էին պատարագի՝ սովորական, աշխարհականից ձևական կերպով տարբեր զգեստների մասին։ Այսպէս օրինակ, իրեւ աստուածպաշտական զգեստ այն ժամանակուայ յիշւում է ուրարը, Լաօդիկիայի ժողովը (331—381) արգելում է կիսասարկաւագներին, դպիրներին և երգիշներին ուրար կրել և ուրարով կարգալ և կամ երգել¹⁾ Յովհան Ռոկեբերանը կիսասարկաւագների մասին ասում է իւր (De filio prodigo) (յաղազս որդւոյն սքանչելոյ) քարոզի մէջ, որ նոքա պատարագի ժամանակ զանազան կողմ շարժուելով, իրենց բարակ երեսրիչներով, որ կրում են իրենց ձախ ուսուերի վերայ, (Δρπται ὀδόνται ἐπὶ τῶν ἀξιστεῖσῶν ὕδων) հրեշտակի թեսերն են յիշեցնում։ Այսուեղ օթօրդ (քաթան, կտոր) խօսքի տակ հասկացւում է ոչ այլ ինչ եթէ ոչ ուրարը և սիդոր Պիլուսիոս (Ե. դար.) յիշում է օթօրդ, բայց հաւաքաջունաւ ու ծառաւաւ, և համեմատում է նորան երեսրիչի հետ, որով Տէրը սրբեց իւր աշակերտների ոտները։

Զոսիմա պապը (417 թ.) սահմանում է, որ կիսասարկաւագները ձախ ուսը ծածկեն պալլիս լինօտիմիս (վշեայ զգեստներ), որոնց տակ ուրարն է հասկացւում։ Աւրելեանի ժողովը (511 թ.) իւր 20-րդ կանոնով արգելում է արեղաներին վանքերում ուրար կրել։ Բակորէնի Բ. ժողովը (563 թ.) պատուիրում է, որ սարկաւագները կիսասարկաւագներից զանազանուելու համար բաճկոնի վերայից և ոչ թէ տակից ուրար կրեն։ Տօլէդի Դ-րդ ժողովը (633 թ.) իւր 28-րդ կանոնով պատուիրում է անարդար կերպով կարգադր արած սարկաւագներին, քահանաներին և եպիսկոպոսներին կարգը վերստացած ժամանակ, ի միջի այլօց ուրար ևս ստանալ, — իսկ 40-րդ կանոնով արգելում է

1) Օքնքների գիրքը. հրատ. 1852 թ. եր. 269.

քահանաներին և աւելի սարկաւագներին երկու ուրարկրել:

Բոլոր այս վկայութիւններից ըստ երեսյթին կարելի է եղած կացնել, որ ուրարը բացառապէս աստուածաշտական զգեստ էր, և աշխարհիկ տնտեսութեան մէջ չէր գործ ածւում: Սակայն ուրարը գործադրւում էր նաև աշխարհական տնտեսութեան մէջ և իւր ձեռվկ բոլորովին նման էր աստուածապաշտական ուրարին, այսինքն այսուեղ այդ անուամբ կոչւում էր երկար վշեայ թաշկինակը, որ կրում էին ուսի կամ վզի վերայ՝ բերանը կամ երեսը մաքրելու համար: Ուրարի աշխարհիկ գործածութեան համար շատ վկայութիւններ կան: Կիպրիանոսի նահատակութեան վաւերագիրները մեզ տեղեկացնում են, թէ որպէս զի նորա արիւնը գետին շթափուէր, քրիստոնեաները դրել էին նորա առաջ lintermina et oraria (կտաւ և թաշկինակ—ուրար): Ամբոսիոսը՝ յիշելով Ղազարոսի մասին, ասում է, որ նորա երեսը կապած էր ուրարով: Հերոնիմոսը Նէպոցիանին գրած նամակում՝ որ կղերիկոսների և կրօնաւորների վարած կեանքին էր վերաբերում, նախատելով տհաճութիւնը նոցա զգեստների, ի միջի այլոց նկատում է, որ ծիծաղելի և միանգամայն անվայելուչ է պարծենալ երբ քրտինք սրբելու համար չունես sudarium orariumque (երեսսրբիչ): Օգոստինոսը պատմելով մի պատանու մասին, որի աջըը հանել էին և միայն մի մազից էր կախուած մնացել այն, բժշկուեցաւ ազօթքներով, որից յետոյ աջըի պտուղը (գիլէն), գարձեալ մտաւ տկնակապչի մէջ,— ասում է, որ այդ հրաշքից յետոյ աչքը կապուեցաւ ուրարով: Նմանօրինակ ըան պատմում է Եւագրը իւր եկեղեցտկան պատմութեան մէջ: Պրուտէնցիոս կղէմինտը նկարագրելով էմինտրիոս և Խելիդոնիոս մարտիրոսների մահը, ի միջի այլոց պատմում է նաև այդ ժամանակ պատահած հրաշքի մասին: Մահուանից առաջ նահատակներից մէկը ձգեց դէպի երկինք իւր մատանին, իսկ միւսը՝ ուրարը, և ի զարմանս բոլորի, քամին տարաւ այդ իրերը վերի: Միենցն ժամանակ կղէմինտը երկրորդ նահատակի վերա-

քերութեամբ աւելացնում է. «hic sui dat pignus oris, ut ferunt, orarium». (ինչպէս ասում են ուրարն է նորա երեսին փայլ տուելը)

Մարկիսն և Նիկանդր նահատակների վկայաբանութիւնից երեսում է, որ մարտիրոսներին նահատակելուց առաջ ծածկում էին նոցա աչքերը ուրարով:

Բոլոր այս գէպքերում, ինչպէս պարզ երեսում է, ուրարը նկատուում է աշխարհիկ հասարակ զգեստ։ Այս աեղից է վերցրած նաև աստուածպաշտական ուրարը։ Բայց ինչպէս հասկանալ այն ժամանակ կրօնաւորներին, կիսասարկաւագներին, ընթերցողներին և սաղմոսասացներին ուրար կրելու արգելումն։ Այստեղ պէտք է նկատել, որ orarium բառը կլասիքական բառագործածութեան մէջ նշանակելով քրտնքի թաշկինակ, կայսրների ժամանակ ուրիշ աւելի ընդարձակ նշանակութիւն ստացաւ։ Այսինքն, երբ որ կրկէմներում զօրեղացաւ կուսակցութեանց բաժանումն, կուսակցական կայսրները սկսեցին ժողովրդին պարգևել թաշկինակներ (oraria), իւրեանց հովանաւորած կուսակցութեան գոյներով, որպէսզի ժողովուրդը կրկէմներում յայտնէ իւրեանց բարեհաճութիւնը կայսրներին և նոցա հովանաւորած վարիչներին։ *) Այս երկրորդ նշանակութեամբ, իբրև կուսակցութեան նշան, ուրարը, հաւանականորէն, յետոյ դարձաւ կայսերական պաշտօնեաների պատուանիշը, իսկ այստեղից անցել է և եկեղեցական վարչութեանը։

(Նարունակիլի):

*) Donasse oraria populo Romano, quibus uteatur populns ad fa oreum. (բաժանում էր Հռովմէական ժողովրդին ուրարներ, որոնք ժողովրդի կողմից բարեհաճութիւն էին առաջ բերում.) Hefele. Cit. op. B. II. s. 186.

